ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 697-Ա

31 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 204-Ա ՈՐՈՇՈՒՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի N204-Ա որոշման N8 հավելվածը (ծածկագրեր՝2.3-1) խմբագրել նոր շարադրանքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«31» հուլիսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի
2026 թ. հուլիսի 31-ի N 697-Ա որոշման

Հավելված N 8
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի
2023 թ. հունիսի 30-ի N 204-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ,ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

2.3-1
(ծածկագիր)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքաշինության և հողաշինության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբում:

2. Բաժնի գլխավոր մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ Քարտուղար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1) Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:

2) Բաժնի գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

3) Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետը կամ բաժնի այլ գլխավոր մասնագետ կամ բաժնի առաջատար մասնագետը:

4) Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա. Բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ. օժանդակում է Բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է բաժնի աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը.

գ. կատարում է Բաժնի պետի հանձնարարականները.

դ. պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաժնի գլխավոր մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

1) Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա. Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

բ. Աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է Աշխատակազմի քարտուղարի, Աշխատակազմի այլ աշխատողների հետ, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.

գ. առանձին դեպքերում բաժնի պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Բաժնի գլխավոր մասնագետն իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է բաժնի առջև դրված խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա. ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

բ. ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հողային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ. տիրապետում է իր պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններին և ունակություններին:

ե. ունի համակարգչով և ժամանակակից գրասենյակային այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա. կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ. կատարում է իր կողմից իրականացվող գործառույթների փաստաթղթային ձևակերպման, համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ.

գ. իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.

դ. անհրաժեշտության դեպքում, Բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

ե. բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

զ. անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում, նախապատրաստում և Բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

է. իրականացնում է քաղաքացիների դիմումների, դիմում-բողոքների և առաջարկությունների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում Բաժնի պետին.

ը. իր լիազորությունների շրջանակում իրականացում է վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարումը և (կամ) վարչարարության աշխատանքները, վարում է վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանը.

թ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՀՓԾ կողմից սահմանած համայնքի տեղեկագրի լրացման աշխատանքները.

ժ. Բաժնի պետին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

ի. մասնակցում է Բաժնի՝ քաղաքաշինության և հողաշինության գործառույթների իրականացմանը.

իա. մասնակցում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և (կամ) դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշման նախագծերի կազմմանը.

իբ. մասնակցում է համայնքի քաղաքաշինական կադաստրի վարման աշխատանքներին.

իգ. մասնակցում է շենքերի և շինությունների համարակալման աշխատանքներին.

իդ. իր լիազորությունների շրջանակում մասնակցում է հակահամաճարակային և արանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների հետևանքների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների իրականացմանը.

իե. մասնակցում է համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման ամենամյա և բազմամյա ծրագրերի կազմմանը.

իզ. կազմում է համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման կամ օգտագործման իրավունքը տրամադրելու վերաբերյալ քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթները, մշակում է համապատասխան իրավական ակտերի նախագծերը.

իէ. մշակում է օրենքով սահմանված դեպքերում ու կարգով համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերի օտարման կամ օգտագործման իրավունքը տրամադրելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի նախագծերը.

իը. իր լիազորությունների շրջանակում իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքները և իրականացնում է ապօրինի հողօգտագործումների կանխարգելման, կասեցման և օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման աշխատանքները.

իթ. իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.

իժ. կազմում է կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն) տալու վերաբերյալ փաստաթղթերի փաթեթները.

իի. լրացնում է շինարարության (քանդման) թույլտվություն տալու վերաբերյալ փաստաթղթերը, հսկողություն է իրականացնում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու նկատմամբ.

իլ. իրականացնում է ավարտված շինարարության շահագործման փաստագրումը.

իխ. իր լիազորությունների շրջանակում իրականացնում է ինքնակամ շինարարությունը կանխարգելելու և կասեցնելու և օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման աշխատանքները.

իծ. իր լիազորությունների շրջանակում իրականացնում է շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության աշխատանքները.

իկ. իր լիազորությունների շրջանակում մասնակցում է համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանության, շահագործման, նորոգման աշխատանքների կազմակերպմանը.

իհ. իր լիազորությունների շրջանակում մասնակցում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման աշխատանքների կազմակերպմանը.

լ. կատարում է իր գործառույթներից բխող պրակտիկայի ամփոփում և դրա հիման վրա ներկայացնում է առաջարկություններ Աշխատակազմի աշխատանքների բարելավման վերաբերյալ.

խ. իրականացնում է իր իրավասության վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը համայնքապետարանի պաշտոնական կայքի համապատասխան հատվածում.

ծ. համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով մասնակցում է աշխատակազմի փաստաթղթաշրջանառությանը.

կ. մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմնի՝ քաղաքացիական պաշտպանության բնագավառի իրավասության իրականացմանը, կատարում է սույն գործառույթների փաստաթղթային ձևակերպման աշխատանքները.

հ. Մասնակցում է Հայաստանի Հանրապետության Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի կատարման աշխատանքներին..

ձ. մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմնի՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի իրավասության իրականացմանը, կատարում է սույն գործառույթների փաստաթղթային ձևակերպման աշխատանքները.

ղ. ըստ անհրաժեշտության օժանդակում է համայնքի ղեկավարին՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված միջոցառումները և ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված լիազորությունների իրականացմանը.

2) Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Բաժնի գլխավոր մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 698-Ա

«31» հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի N 27-Ն հրամանով սահմանված «Համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգ»-ի 15-րդ կետը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ՝ համաձայն հավելվածի:
2. Մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը սահմանված կարգով հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային «http://www.azdarar.am» և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի պաշտոնական համացանցային «www.anicity.am» կայքերում, ինչպես նաև փակցնել համայնքապետարանի տեղեկատվական ցուցատախտակին:
3. Թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«31» հուլիսի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
ղեկավարի 2026 թվականի հուլիսի 31-ի թիվ 698-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ

N	Թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը
1	2	3	4	5
1	***Անի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եվ հավաքագրման բաժնի պետ*** ***/ծածկագիր՝ 2.1-3/***	Բաժնի պետը ա. ունի բարձրագույն տնտեսագիտական կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ. բ. ունի «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ	18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները և տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /	Քաղաքացիները իրենց ցանկությամբ, մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը՝ բնօրինակների հետ միասին, կարող են ներկայացնել հայտարարության մեջ նշված փաստաթղթերի ներկայացման համար նախատեսված որևէ հասցեով,

		կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. գ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը դ. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.	այսուհետ՝ քաղաքացիներ/:	ներկայացնելով՝ 1) գրավոր դիմում (Ձև 1). 2)քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն. 3)դիպլոմի լուսապատճեն. 4)առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ). 5)աշխատանքայի ն գործունեությունը հավաստող փաստաթղթի

				պատճեն. 6) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն. 7) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 8) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում

				նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը. 9) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 10) հայտարարություն այն մասին դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն. 11) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող

				օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.
2	***Անի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման Եվ հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ*** ***/ծածկագիր՝ 2.3-3/***	Բաժնի գլխավոր մասնագետը՝ ա. ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ. բ. ունի ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին»		

		ՀՀ օրենքի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. գ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը. դ. ունի համակարգչով և ժամանակակից գրասենյակային այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.		
3	***Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության,կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի*** ***/ծածկագիր՝ 2.3-1/***	Բաժնի գլխավոր մասնագետը՝ ա. ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ. բ. ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի, Հողային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր		

		իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. գ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը. դ. տիրապետում է իր պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններին և ունակություններին: ե. ունի համակարգչով և ժամանակակից գրասենյակային այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն. ց. ընտանիքների) սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը. դ. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:		
4	***Անի համայնքապետարանի աշխատակազմի անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջին կարգի մասնագետ*** ***/ծածկագիր՝ 3.2-6/***	Բաժնի առաջին կարգի մասնագետը՝ ա. ունի առնվազն միջնակարգ կրթություն. բ. ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի,աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. գ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը. դ. տիրապետում է անհրաժեշտ կառավարչական հմտություններին, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններին և ունակություններին ե. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:		

5	***Անի համայնքապետարանի աշխատակազմի անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջին կարգի մասնագետ*** ***/ծածկագիր՝ 3.2-14/***	Բաժնի առաջին կարգի մասնագետը՝ ա. ունի առնվազն միջնակարգ կրթություն. բ. ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի,աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. գ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը. դ. տիրապետում է անհրաժեշտ կառավարչական հմտություններին, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններին և ունակություններին ե. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:		
	Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
	Վայրը՝ Անիի համայնքապետարանի վարչական շենք /ավագանու նիստերի դահլիճ/, 2026 թվականի սեպտեմբերի 4-ին՝ ժամը 11:00	Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները դիմում ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և թեստավորման փուլի համար կազմված հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել 1.Անիի համայնքապետարան /հասցե՝ քաղաք Մարալիկ, Մադաթյան 1, հեռ.՝ 0242-2-22-37/, 2.ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն /ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16, հեռ.՝ 0312-4-90-00*117/		**Մինչև 2026 թվականի օգոստոսի 14-ը ժամը 18:00-ն ներառյալ**

	Մրցույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով	Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր՝ ժամը 09:00-18:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից: Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները հայտարարությանը կարող են հետևել http://anicity.am կայքում, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի պաշտոնական համացանցային կայքում հետևյալ հղմամբ՝ *http://shirak.mtad.am/hamayn/*		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 699-Ա

«31» հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

որոշում եմ՝

1. Գործառական դասակարգման բաժին 01. խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4831 (Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ) հոդվածի «0» թիվը փոխարինել «3557,2»թվով:

2. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «10000.0» թիվը փոխարինել «6442,8» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«31» հուլիսի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 700-Ա

«31» հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 3-րդ ենթակետի և 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 50311120 գնանշման հարցման միջոցով՝ ծառայությունների /Գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ/ ձեռքբերման նպատակով գնումների կազմակերպման համար սահմանել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.
   Հարություն Համբարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (նախագահ)
   Գևորգ Շաբոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի խորհրդական /անդամ/
   Գոռ Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի խորհրդական /անդամ, բացող/

Գագիկ Պողոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար /անդամ, բացող/

2. ՇՄԱՆՀ-ԳՀԾՁԲ-26/8 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Հայարփի Եղիազարյանին: Սահմանել, որ ՇՄԱՆՀ-ԳՀԾՁԲ-26/8 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2026 թվականի հուլիսի 31-ին, ժամը 10:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքապետարան քաղաք Մարալիկ, Մադաթյան 1 հասցեում:

3. Գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն և այլ իրավական ակտերին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«31» հուլիսի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 701-Ա

«31» հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 09-Ի N 602-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 09-ի N 602-Ա որոշման երկրորդ կետը խմբագրել նոր շարադրանքով. «Վերը նշված ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Հայարփի Եղիազարյանին»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«31» հուլիսի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 702-Ա

«31» հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ «ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԻ ԼՈՌԵՑՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի № 140-Ն որոշումը.

որոշում եմ՝

1.«Հակոբ Կարապետի Լոռեցյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 20042307) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոց 20-րդ շենքում գտնվող հիմնական շինությունում տրամադրել հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2.Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին պատշաճ իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«31» հուլիսի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 703-Ա

03 օգոստոսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՐԻԿ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0022-0048/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-003-0022-0048/ Գարիկ Վարուժանի Ավդալյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 0,06000 հեկտար հողամասին և նրանում առկա բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Նոր թաղամասի 5-րդ փողոց, թիվ 3 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«03» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 704-Ա

03 օգոստոսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆՈՒԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՍԱԴՈՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-100-0077-0004/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-100-0077-0004/ Մանուկ Անուշավանի Սադոյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 0,092 հեկտար հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 9-րդ փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 3 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«03» օգոստոսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-24-37, էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 705-Ա

«03» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0024-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ՝ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 02-Ի N 475-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի «ա և բ», ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցների հաշվառման տվյալների մուտքագրման **2026456L9T** տեղեկանքը, քաղաքացի Տարիել Արթուրի Ավետիսյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան ներկայացված դիմումը՝ 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները օրինական ճանաչելու մասին.

Որոշում եմ՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Տարիել Արթուրի Ավետիսյանիմ /ծնված՝ 26-ը օգոստոսի 1989 թվական,անձնագիր՝ AL0279311, տրված 09-ը հունիսի 2023 թվականին՝ 022-ի կողմից/, միանձնյա սեփականության իրավունքով պատկանող (Հիմք՝ վկայական N 13122017-08-0016) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 3-րդ փողոց, թիվ 5 հասցեում գտնվող 08-003-0024-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության փաստացի **0,10360** հա մակերեսով հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված **8,03** քառակուսի մետր մակերեսով բնակելի տան հատվածը, **5,55** քառակուսի մետր մակերեսով պարիսպը/հետագայում՝ անշարժ գույք/ բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունը ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունները՝

ա) չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ շինությունները օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինությունները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է՝ **13,58** քառակուսի մետր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա և բ» ենթակետերի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 15-րդ գոտում ընդգրկված՝ Մարալիկ քաղաքի համար սահմանված շինության՝ 0.1028 գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

13,58 քառակուսի մետր X 10000 դրամ X 0.1028 = 13 960 (տասներեք հազար ինը հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է **13 960 (տասներեք հազար ինը հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ,** որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի **900495101447** հաշվեհամարին:

գ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Հողամասում առկա են 2021 թվականից հետո կառուցված շինություններ, որոնք օրենքով սահմանված կարգով կադաստրի կոմիտեում հաշվառված չեն որպես ինքնակամ կառույցներ, ուստի անհրաժեշտ է շինությունները թողնել ինքնակամ, անշարժ գույքի նկատմամբ քաղաքացու սեփականության իրավունքը ենթարկել պետական գրանցման և տրամադրել սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական:

6. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատիրոջը սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 02-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի, Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 3-րդ փողոց թիվ 5 բնակելի տուն հասցեում գտնվող 08-003-0024-0007 կադաստրային ծածկագրով հողամասի վրա՝ ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները օրինական ճանաչելու մասին>> N 475-Ա որոշումը:

8. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացունն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<3>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 706-Ա

«04» օգոստոսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ԱՂԱՍՈՒ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 57531367) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՓՈՂՈՑԻ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Պարույր Աղասու Նիկոլյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Պարույր Աղասու Նիկոլյանին (հարկ վճարողի հաշվառման համար՝ 57531367)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի 2 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Պարույր Աղասու Նիկոլյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«04» օգոստոս 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-22-37, էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 707-Ա

«04» օգոստոսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ 6-ՐԴ ՓՈՂՈՑ 30 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-044-0002-0038 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ՝ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-ԻՑ ՀԵՏՈ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի «ա», ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցների հաշվառման տվյալների մուտքագրման 2026LWTXNN տեղեկանքը, քաղաքացի Սարգիս Մարտիրոսի Պողոսյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան ներկայացված դիմումը՝ 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված բնակելի նպատակային նշանակության բնակելի տունը օրինական ճանաչելու մասին.

Որոշում եմ՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Սարգիս Մարտիրոսի Պողոսյանի /ծնված՝ 03-ը հունվարի 1958 թվական, անձնագիր՝ AO0385096, տրված 22-ը հոկտեմբերի 2025 թվականին՝ 028-ի կողմից/, միանձնյա սեփականության իրավունքով պատկանող (Հիմք՝ վկայական N 01042019-08-0019) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայր 6-րդ փողոց 30 բնակելի տուն հասցեում գտնվող 08-044-0002-0038 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փաստացի 0,088 հա մակերեսով հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 51,55 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հատվածը

/հետագայում՝ անշարժ գույք/ բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունը ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չե Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ շինություն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինություն, որի ընդհանուր մակերեսը կազմում է՝ **51.55** քառակուսի մետր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա» ենթակետերի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված՝ Լանջիկ բնակավայրի համար սահմանված շինության՝ 0.0536 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

51,55 քառակուսի մետր X 10000 դրամ X 0.0536 = 27 631 (քսանյոթ հազար վեցը հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է **51,55 (քսանյոթ հազար վեցը հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության**

դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին:

գ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Հայտնում ենք որ 2021 թվականից հետո կառուցված շինությունները թողնել ինքնակամ:

6. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատիրոջը սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<04>> օգոստոսի 2026 թվական
քաղաք Մարալիկ